

ԲԱՃԱՆՈՐՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուշկարինյ կամար
 Տարեկան 10 Պր.
 Վեցամսեայ 5 »
 Արսասանմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՒԿՎԱԾՅՐԵԼԻ
 —)(—
 Գրութիւնք եւ յին տույր
 —)(—
 Իսկուցման տողը 20 սան-
 քիւն է. Երեկոն առ ի սն-
 ցանկերու համար 20 Օլօ
 գեղջ կրողայ :

ՇԱՐՋՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկել
 Խ.Տրագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐՈՒԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ, 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ, 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. Сукьясовъ.

ՎԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Արտասահմանի հայ մամուլի մի մասը ճիգեր է թափում որոշել հայի քաղաքականութիւնը և այդ ճիգերը արտայայտում այնպիսի ոճով, որ կարելի է կարծել թէ հայը մի անկախ ազգ է և նրա գիւղամաս դեպքաները գտնվում են զօրեղ պետութիւնների մայրաքաղաքներում, թափանցում են արտաքին քաղաքականութեան մշտնջապատ գաղտնիքների մէջ և ճշգրիտ տեղեկութիւններ են հա- լիս մեր մամուլի քաղաքագէտնե- րին...

Մեր քաղաքագէտների յօդ- ւածները կարգալիս, մարդու ա- կամայից յիշում է կրիտիկ ա- ուածը. «Վայ մեզ, երբ կօշկա- կարը սկսում է կարկանդակ ե- փել, իսկ կարկանդակ եփողը կօ- շիկ կարել»:

Մենք էլ մեզ թոյլ ենք տալիս ասելու—վայ մեզ որամէնմի հայ քաղաքագէտ է դարձել, գրում է և իր անմիտ յօդուածներով ու- զում է դժել հայ ժողովրդի քա- ղաքական կեանքի ծրագիրը:

Արդեօք այդ քաղաքագէտ յօդ- ւած գրողները տհաս մանուկներ են, թէ մեծամտութեան ցաւով վարակված իմաստակներ. ահա ինչ հարց է ծագում մարդի մըտ- քում, երբ կարդում է Բիսմար- կին կամ Պլադստոնին յատուկ ձեւով գրված այսպիսի խօսքեր.— Անգլիացիները խաբւաններ են. մենք ուսուցարէն կսպասենք օգ- նութիւն, այն է մեր միակ վերը- կիչը. Անգլիան թո՛ղ լռէ և այլն. որչա՛փ մանկական բարկութիւն, որպի՛սի ծիծաղելի ոգեւորու- թիւն...

Գուցէ այսպէս գրողները փոր- ձառու գիւղամասներ են, որոնք ուզում են ուսուցարին խաբել, ազգը ազատել տալ և սպա երես դարձնել ազատարար ցարից: Եթէ այդպէս է. մեր քաղաքա- գէտները աւելի ծաղրելի են դառնում, որովհետեւ ուսուց- նախօրօք գծած քաղաքական ծրագիր ունի հայերիս վերաբեր-

մամբ և արեւելեան կեղծաւորու- թիւնը մեզ աւելի արհամարելի կը դարձնի:

Այժմ, երբ հայը որոշ ճանա- պարհի վրա է գտնվում, և, ա- մենադառն փորձերից յետոյ՝ հա- ղիւ եկել է այն եղբակացութեան թէ աշխարհում մարդասիրու- թիւնը գոյութիւն չունի, թէ ոչ մի եւրոպական ազգ չը բռնեց ի- րան կոտորող թուրքի բազուկը, իսկ ցարը բացարձակ զօրավիգ եղաւ արիւնտուշա՞ դահին, և դեռ այդ բաւական չէր, սկսեց հալածել իր հպատակ հայերին, աքորել ու դպրոցները յափշտա- կել՝ վեր կենալ և կրկին մոլո- րեցնել հայ ժողովրդին, ստիպել նրան կրկին յոյսը դնել օտար մարդասիրութեան վրա, կատարե- տալ յիմարութիւն է եթէ ոչ ու- րիշ բան...

Ժամանակ է թողնել այդ ցըն- դարանութիւնները, և պարզել որ հայի միակ քաղաքականութիւնը պէտք է լինի, որոշել մեծ պետու- թիւնների քաղաքական շահերը մեր խնդրի վերաբերմամբ, ըմ- բռնել որ Անգլիան կամ մի ուրի- շը եթէ մեզ աջակցեն, այդ մեր սեւ աչքերի սիրուն չի լինի, այլ իրանց շահերի համար, որը կա- յանում է ուսուցար ազդեցութիւնը ոչնչացնել Փոքր Ասիայում և նրա յառաջ խաղալուն խոչնդոտ ստեղ- ծել. իսկ մեր պարտականու- թիւնը և մեր շահը պահանջում է, ամէն ճիգ թափել այդ ար- գելք գառնալու արժանաւոր և յուսալի տարրը հանդիսանալ, մանաւանդ որ երկիրը մեր հայ- րենիքն է: Միակ սեղը, ուր հայը կարող է ինքնուրոյն կեանք ունենալ և իր իղձերը իրագոր- ծել, ժամանակ է հայ ժողու- վրդի սրտում և ուղեղում սեղ- մել, որ ուսուցար չի կամենալ ան- կախ կամ փոքր ի շատէ ինքնու- րոյն Հայաստան տեսնել, որով- հետեւ նա կարծում է թէ այդ երկիրը ազատվելուց յետոյ՝ բնա- կան պատճառների դրամամբ կը բարեկամանայ թուրքերի և պար- սիկների հետ, նրանց հետ միա- սին կը հովանաւորվի Անգլիա- յից կամ մի ուրիշ եւրոպական

զօրեղ պետութիւնից և գրէթէ անյաղթելի խոչնդոտ կը դառ- նայ ուսուցար տիրապետական ծրա- գիրները իրագործվելուն...

Մեր քաղաքագէտները պէտք է համոզված լինեն որ ինչչափ էլ կեղծաւորութիւն անեն կամ գիւղամասութիւն, չեն կարող ուսուցար կառավարութիւնը ազատել մեզ համար աննպաստ կարծի- քից: Նրանք միայն կը փասեն հայամբոխին, որը մէկ իր փրկու- թիւնը սպասում է Պլադստոնից, մէկ «Հայրիկից» մէկ ուսուցար ցարից. և, երբ յուսախափվում է, սկսում է բոլորին էլ հայհոյել ու շարել...

Այդպէսով նա միշտ զուրկ է մնում հաստատուն հողից. միշտ տատանվում է և կը շարունակի տատանվել, մինչև բոլորովին կը գործվի...

Վերջապէս բաւական է խաղալ միամիտ ժողովրդի սրտի հետ և այդ սիրտը հիւրանոց դարձնել այս ինչ կամ այն ինչ թէ՛ օտար և թէ՛ ազգային կարծեցեալ ա- ղատիչների համար:

Այսուհետեւ հայ ժողովրդին պէտք է ասել և համոզել. «Ով որ հայ չէ, հայուն ցաւերն ալ չըզգար»: լարել բոլոր ուժերը. յոյսը միայն քեզ վրա դիր, ա- հագին պոռտկումով ցոյց տուր քո մարդկային արժանաւորու- թիւնները, պատուի և երոպական քաղաքականութիւն կոչված թնձ- կած հանգոյցը և, ահա այն ժա- մանակ, քաղաքացիութեան մէջ շահ ունեցող զօրեղ օգնականը, ա- ուանց քո աղաչանքին, ինքնի- րեն կը վազի...

ՎԱՐԿՈ

ԻՆՔՆԱՊԱՇՏՄԱՆՈՒԹԻՒՆ

—)(—
 Իսկ այս երկրորդ փորձը զգացուց որ ինքնապաշտպանութեան գործը անարգել յառաջ տանելու համար ան- հրաժեշտ էր անկախ խմբի կազմա- կերպել, ճիշդ թշնամի հրոսակներու նման, որոնք կարենային անգէն հայ գիւղացիները պաշտպանել քիւրդ ա- պատակներուն դէմ և ազատ մնալ կառավարութեան ձեռքադրութիւն- ներէն: Անձնանուէր քաջերը սիրա- յօժար խմբուեցան և սկսան հայուն

կեանքն ու ստացուածքը պաշտպա- նել աւարառուներու դէմ՝ որոնց հետ ևւ այդ առթիւ արիւնալի ընդհա- րոււմներ ունեցան: Եւ ահա դարձեալ թուրք կառավարութիւնը գինուորա- կան զօրութեամբ հետապնդեց «հայ աւագակները, որոնք երկրին խա- ղազութիւնը կուզէին վրդովել»: Ձեր- բակալածները բանտերու տանջան- քին տակ կամ կախազաններու վրայ սպանեց, իսկ չձեռքազաւուածներու փոխարէն անմեղները պատեց:

Սակայն գործողները չյուսահատե- ցան. նահատակներու մահը նոր քա- ջեր յարուց, հետզհետէ ստուարացան հայրուկներու, Ֆէդայիներու խըմ- բերը, որոնք ահ ու սարսափ սփոռ- ցին հայութեան թշնամիներուն շար- քին մէջ. և մեր ժամանակակից պատմութեան ամենափայլուն շրջա- նը, երբ 2510 իւր առասպելանման շահատակութիւններով Փոքր-Ասիան կը սարսէր. Արաբ՝ Մշոյ քրդերը կը սանձահարէր, Պարսիկ Միւնէտ իր խըմ- բակներու զօրութեամբ աներեւոյթ տիրապետութիւն մը կը տարածէր Մարզուանի մէջ: Այս խմբերը որ բազմանալով ու զօրանալով իրական ոյժ մը պիտի ըլլային գաւառներու պաշտպանութեան համար՝ կամ ցըր- ուեցան և կամ կարճատեւ գոյու- թիւն մը միայն ունեցան չնորհիւ մեր «խոհեմ ազգասէրներուն, ո- ռոնք թուրք կառավարութիւնը չը զայրացնելու ևւ հայ ժողովուրդը ա- ւելի մեծ աղէտներէ փրկելու հեռա- տեսութեամբ, աւելի ճիշդ՝ անձնա- կան հրէշային հանգստութիւններն պահպանելու նպատակով՝ կառավա- րութեան հետ ձեռք ձեռքի տուած անխնայ հալածեցին, լրտեսեցին, դա- ւաճանեցին, իրենց մատաղ կեանքը ժողովուրդի պաշտպանութեան նուի- րող քաջերը:

Խմբերը գրեթէ անհետացան, բայց վասնզը՝ անհեղին վտանգը չէր խա- փանուած...

Թուրք կառավարութիւնը ամէն միջոցներով հայերու ինքնապաշտ- պանութեան պատրաստութիւնները արգիլելէ յետոյ, քաղաքական յար- մար ստիթի մը կը սպասէր ակնդէտ, իր անպատիւ սուրը շարժելու ան- պաշտպան ժողովուրդի մը մէջ: Ու այդ ստիթը չուշացաւ. Գրիստոնեայ պետութիւններու փոխադարձ շահա- մոլական մաքառումներու պահուն՝ արիւնի հեղեղն ու հրդեհի բոցը ծած- կեցին հայ աշխարհը: Չարդերու ող- բերգական պատմութիւնը բազմա- թիւ ջախջախիչ փաստեր կը պարու- նակէ հանդարտ ինքնապաշտպանու- թեան կուսակիցներուն դէմ: Մենք

ի մէջ բերենք մէկ քանին, ամենէն յատկանշանականները:

Նախ համառօտակի յիշենք վասպուրականի ջարդը՝ զոր հակայեղափոխութեան փաստաբանները յաւիտենական փաստ ըրած են իրենց՝ նոյն իսկ զէպօքին հեղինակ Սասնէտտին փաշայի մէկ մտերիմէն առնուած ամենաստոյգ տեղեկութիւններու համաձայն:

Թուրք կառավարութիւնը, որ կուզէր յանկարծական գործողութեամբ, անկանկալի մը երեւոյթը տալ կոտորածներուն, կանխազգուշութիւն ունեցած էր լրտեսներու եւ ոստիկանական հսկողութեան միջոցաւ քննել հայերու պատրաստութիւնները մանաւանդ այն տեղեր, ուր հայերը թուական առաւելութիւն ունէին, որ մի գուցէ զօրաւոր ընդդիմութեան մը հանդիպելով խնդիրը ներքին պատերազմի վրդովեցուցիչ կերպարանքը ստանայ: Վանի մէջ հայերու համեմատութիւնը զօրաւոր էր եւ կուսակալ նազըմ փաշա, որ ջարդի կուսակից մը չէր, իր տեղեկագիրներուն մէջ կը հասկցնէր թէ՛ կրնար ծանր հետեւանքներ ունենալ հոն այսպիսի յարձակում մը, հո՞, զինուած եւ մանաւանդ ինքնապաշտպանութեան պատրաստականութիւն ցոյց տուող հայերու զէմ:

Հետեւաբար որոշուեցաւ նախ միւս նահանգներու գործը վերջացնել ու սպասելով իր կարգին Վան զրկել Ֆէրիզ Սասնէտտին փաշան, արտաքոյ կարգի քննիչի անունով, որ պէս զի հարկ եղած արտակարգ պատրաստութիւնները անօրին է:

Սասնէտտին՝ ընդունակ իր պաշտօնին, շրջակայ քրդերուն հետ բանակցեցաւ, խուժանը հրահանգեց, բէտիֆները զուժարեց եւ բոլոր պատրաստութիւնները լրացնելէ ետքը, սկսաւ անուղղակի կերպով հայերը գրգռելու ջանքեր ընել, որպէս զի յարձակումի պատրուակ մը ձեռք ձգէ:

ՎԱՐԴ-ՊԱՏՐԻՈՎԻ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆԸ (34)

Յետոյ սկսեցին հարցեր տալ կուսակցութեան ծրագրի մասին. եւ աւելի շեշտեցին այն կէտի վրա, ուր սովոր է թէ՛ նախ պէտք է ազատել Տաճկահայաստանը, ապա՝ Պարսկահայաստանը վերջապէս Ռուսահայաստանը ու աւելցրին:

—Ուրեմն ձեր նպատակը չէ յեղափոխութիւնն բարձրացնել միայն Տաճկաստանում այլ եւ Ռուսաստանում:

Այդ տեղ քննիչը մի առանձին նայաժողովի գլխից Մաքսիմովի վրայ:

Ես ժպտալով պատասխանեցի:

—Այդ ծրագիրը կազմված է տեսակետային: Այնու ամենայնիւ, նոյն իսկ այդ տեղ շեշտվում է որ մեր առաջին գործը պէտք է լինի ազատել Տաճկահայաստանը. այդ իրագործելու համար գուցէ մենք պէտք ունենանք շատ տարիների, այնուհետեւ մի քանի տասնեակ տարի էլ պէտք է անցնի որ մենք կարողանանք Պարսկաստանի վրա յարձակվել, եթէ միայն դրա պէտք է զգայ սպազայ ազատ Տաճկահայաստանը: Այդ բոլորից յետոյ էլ շատ եւ շատ տարիներ պէտք է անցնեն, որ հայը յանդգնի ուժով ազատել եւ Ռուսահայաստանը:

—Այդ բոլորը իրագործելու համար շատ տասնեակ տարիներ են հարկաւոր, նոյնպէս եւ շատ, հայերի համար, յաջող եւ նպատաւոր քաղաքական պայմաններ ու բոլորովին թուլացած

իր թելադրութեամբ հայերու մասնաւոր սպանութիւններ տեղի կունենային հրապարակաւ, ու ոճրագործները անպատիժ կը թողուէին, քրդերու ամենօրեայ յարձակումներէն փախուսական հայ զիւղացիներ քաղաքին փողոցները կը խոնուէին մերկ ու անպատապար: Այս մասին առաջնորդական փոխանորդ Սահակ վարդապետի թողութիւնը անլսելի կը մնային: Սահայն հայերը համբերեցին ու մինչեւ վերջ զրուշացան նախայարձակ ըլլալէ. յեղափոխական կազմակերպութիւնները իրենց ուժերը կը հաւաքէին, մտալուտ անխուժափելի վտանգը մատնանիչ ընելով ժողովուրդը կը խրախուսէին արթուն մնալու: Մինչեւ Սասնէտտին համբերութենէ ելած՝ թուրք մագսաններ գերու կոխով մը փնտաւ պատրուակը ստեղծեց: Սասնոյ անդրանիկ ջարդին հերոսներէն Հալիմ էֆէնտի զինուորական ջոկատի մը գլուխ՝ կանոնաւոր հրացանաձգութեամբ կոտորածի նշանը տուաւ: Առաջին օրը հայ ժողովուրդը չուարած՝ 800ի չափ զոհ տուաւ, բայց երկրորդ օրը յեղափոխականներու յորդորներէն ու զիւցանական օրինակէն խրախուսուած զէնքի զինեց, թաղերու մտաքերը պատնիշեց ու սկսաւ յուսահատ գիւղերու թիւն: Վանի ամրոցը զօրքը, կառավարութեան ձեռքով զինուած թուրք խուժանը, հետզհետէ քաղաք խուժող Համիտիէ գնդերը անզօր մնացին այդ կէս զինուած ժողովուրդի հերոսական ընդդիմութեան զէմ եւ թրքական վատութիւնը դարձեալ խարդախութեան զինեց, Սասնէտտին միջնաբերդի բարձունքէն թնդանոթները ուղղեց հայկական թաղերու վրայ ու հիւպատոսներուն միջոցաւ յայտարարեց թէ պիտի ուժբեկոճէ եթէ ապստամբները անձնատուր չըլլան: Յեղափոխականները ժողովուրդի ապահովութեան մասին հիւպատոսներէն պաշտօնական երաշ-

մի Ռուսաստան...

Այդ առ այժմ տեսական յեղափոխականները երաշխէ, որը իրագործելու համար եթէ ոչ դարեւ գոնէ մի դար պէտք է: Այդ տեղ ձեզ բարկանալու եւ զարմանալու ոչինչ չկայ. որովհետեւ այդ ահագին ժամանակվայ մէջ՝ կարող են ոչ միայն այդպիսի փոփոխութիւններ տեղի ունենայ այլ եւ կարող է մի նոր Գրիստոս գալ եւ մի քանի նոր Մահմետներ. — դուք, ի զուր Պ. հարցաքննիչ, շեշտում էք Ռուսաստանի եւ Պարսկաստանի վերաբերեալ կէտերի վրա. մեր գործը նախ եւ առաջ թուրք ստոր եւ բռնակալ վարչութեան հետ է. մեր կողմը եւ հայրը առ այժմ ձեզ հետ է...

Հարցաքննիչը կու տեսցի իմ խօսքերը. քեանիպը զողալով արձանագրեց:

Յետոյ սկսեցին հարցնել ինձ մօտ զանված լուսանկարների մասին, որոնց մէջ ոչ մի յեղափոխականի պատկեր չը կար. վերջապէս քննիչը մտաբ մեկնեց զէպի ընկուզեայ փոքրիկ առփը եւ հարցրեց թէ այն ի՞նչ է:

—Հասարակ սիգարի տուփ, իսկ ես այնտեղ տեղ եւ գրիչներ եմ գրել:

—Ապա վերցրէք եւ այնտեղ, մի քիչ հեռուն, բաց արէք:

Երկուքը վախում էին թէ նրա մէջ ինչ որ սայթալեցի եւ վտանգաւոր բան կար: Վերցրի տուփը եւ բաց արի. տեղ ու գրիչները դուրս թափվեցին եւ իմ հարցաքննիչը ու

խաւորութիւն աննիւէ ետքը այդ վերջին զոհողութիւնն ալ ընդունեցին ու իրենց հետեւորդներով քաղաքէն ելան, Ազրակի կերտներուն մէջ իրենց սպասող մարդակեր Շէրէֆի հրոսներէն խողխողուելու: Իսկ Սասնէտտին հայ երեւելիներուն բտորագրել տալէ յետոյ ուղերձ մը, որու մէջ երախտագրութիւնը գովելով կայսերական գոմիսէրի ընթացքը՝ Վանի հայութիւնը Սուլթանի ներումը կը հայցէր, թնդանոթներու բերանները բացաւ եւ իրենց տներու փրտակներուն տակ թաղեց հազարաւոր անպաշտպան մնացած հայեր:

ԿԱՐԻՃ

(Շարունակելի)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԼՈՒՉԷՆԻ

Յայտնի չէ թէ զո՞վ պէտք է համարել ժընէպի ահուկի տուամին հերոսը. Լուչէնի՞ն որ դանակի մէկ հարուածով տիեզերահուշակ մարդասպան մը դարձաւ Ռավաչոյի, Վայնտի եւ Քաղէրիօի հաւասար՝ թէ հէգ էլիզապէթ կայսրուհին, որ Ալպեաններու սուքին տակ մեռաւ, անմըքմունջ եւ անտրուունջ, իր կեանքով քաւելով այն արմատացած եւ անողոք քիւնեղութիւնը որով անիշխանականութիւնը կը պարուրէ ամէն թագակիր գլուխ, ամէն ինչ որ իր ձեռքին մէջ է շուրթերուն վրայ կը կրէ ժողովուրդներու ճակատագիրը:

Անիշխանականութիւնը դպրոց մըն է բոլոր այն դպրոցներուն պէս, որոնք ընկերական արդի-

չարած քեանիպը ազատ շունչ քաշեցին...

Այնուհետեւ հարցաքննութիւնները շարունակվեցին սովորական կարգով:

Մի գեղեցիկ օր քննիչը ինձ ասաց:

—Դուք բոլորը սուտ ասացիք: Ձեր կոմիտէի անդամները ուրիշներ էին: Եւ ներս բերեց փոստածի Արմենակին, բողբոջական Մկրտիչին, շէմշի՛ն Բաղդասարին, եւ ինձ հարցրին՝ սրանց ճանաչու՞մ էք:

Ես ասացի՛ ոչ:

—Իսկ սրանք քեզ ճանաչում են: Այնպէս չէ՞: Արմենակ, Մկրտիչ, Բաղդասար:

Եւ այդ ստոր արարածները ասացին՝ այո, ճանաչում ենք: Ես կատաղեցի: Թշուառականները կարծում էին թէ դրանով իրանց դրութիւնը բարելաւում են: Ձէին իմանում որ ես ամէն բան ընդունել էի ինձ վրա եւ իրանց այդ յայտարարութիւնով աւելի իրանց գործն են վաթաբարացնում:

Այդ օրը իմացայ եւ այն որ Գրիգոր Գըրճեանը բանտից մի բաւական պարզ եւ բոլոր բռնվածների մեղաւորութիւնը հաստատող նամակ էր գրել ազատ ընկերներին ուղարկելու եւ աւել ոստիկաններից մէկին տանելու: Ի հարկ է ոստիկանը նամակը հասցրել էր Նաղի մին, Նամակը գրված էր զեզին, շաքարի թղթի վրա: Այդ ինձ յայտնեց Մաքսիմովը եւ ասեց. շատ էք աշխատում սրանց փրկելու:

կարգու սարքէն դժգոհ, բողբոքելէ յոգնած, պաղատելէ յուսահատ՝ բրբռականաւ, թերթերու, ե քարոզութիւններու փոխանակած են ամենէն արմատական միջոցները ե ցնցիչ անուկնկալները: Երեկ, տարաբախտ Գառնօն էր որ Լիւնի սալահատակը իր արիւնով կը ներկէր, Գանուվան էր որ Մատրիտի հանրային պարտիզին մէջ հողին կաւանդէր անիշխանական զնդակին տակ. վաղը գուցէ ուրիշներ նոյն տխուր վախճանին հանդիպին:

Յաւալի դէպքեր են ասոնք, որոնց այնքան փափագելի չընջումը կախում ունի նոյն իսկ վեհապետներու բռնելիք ընթացքէն հտնդէպ մարդկութեան, որ տառապանքէն խելայեղ՝ ա՛լ ընելիքը չգիտեր: Եւ ասոր համար է որ աշխարհի մէջ սուտարածի անձեր, զիրենք շրջապատող անիրաւութիւններէն կարծացած, կարծես ազատ շունչ մը կառնեն ամէն անգամ որ արիւնը կը հոսի վեհապետական կուրծքերէ. որովհետեւ ասոր մէջ նշմարել կը կարծեն ահաբեկող ե զգաստացուցիչ օրինակ մը յաջորդներու համար: Բայց հէգ էլիզապէթ կայսրուհին խողիողելով չէ որ անիշխանականութիւնը իր նպատակներուն կրնայ հասնիլ: Սպանեց հրանդ եւ անարիւն պառաւ մը, որ իր զաւկին մահուան վիշտէն ընկճուած եւ աղազուն առողջութիւնը դարմանելու համար կը թափառի, այսօր ջերմուկ մը վաղը ծովափ մը կամ լեռան մը անտառապատ կողը. դաշտնե՛լ

նրանք արդէն ամէն բան տակն ու վրա են արել. ոմանք միամտաբար, ոմանք էլ իբր աղտոտ մարդիկ... Բայց եւ այնպէս սրանից յետոյ ձեր բռնած զիրքը եւ տակաւ ուրիշ պէտք է լինի. այդ աղտոտութիւնից մի վրդովվէք. հազուադէպ է պող արիւն լինել. գործնիրք խըճճվում են:

Այո, ես զգացի որ ոտքիս տակի հողը կորչում էր. էլ չկարողացայ այդ վատերի երեսին նայել, խնդրեցի դուրս աանել, ասելով, է՛, ի՛նչ արած. եթէ դրանք ինձ ճանաչում են, ես էլ իրանց եմ ճանաչում:

Գնացին իսկապէս բոլորին մասնողները, որովհետեւ այդ երեքը բոլորին էլ ճանաչում էին եւ խոստովանել էին. պէտք էր մտածել. հարկաւոր էր նրանց արածը ուղղել. դրա համար էլ ես յայտնեցի որ կը չեմ շարունակի եւ յուզված, շաքարած, մտամոլոր վերադարձայ բանտ, խորհելու, մտածելու թէ այնուհետեւ ինչ գիրք պէտք է ընելի:

Այդ օրը պարսկական բանտը իսկապէս բանտ դարձաւ. գործին բաւական մօտիկ մարդիկ ամէն բան խոստովանել էին. եւ գուցէ սարսափի ազդեցութեան տակ, շատ բան էլ աւելացրել էին, ինչպէ՞ս դուրս գալի այդ միճակից, ի՞նչպէս սահմանափակել մասնաւորների թիւը...

Ահա այդ խնդիրները ինձ բաւական տանջեցին ամրոցը գրելու:

(Շարունակելի)

հարիւր սպանիտայի խեղճ նաւազներ ջարդեցին, քանի մը արժեքաւոր նաւեր ընկղմեցուցին, որովհետեւ յաղթողներ են. չէ՛, Սամսըն եւ ամերիկայի ամբողջ պատերազմող բանակը անո՛ր համար դիւցազներ են, հերոսներ են... որովհետեւ ճշմարտութեան արտոյեանները եղան. հարստահարուած, հալածուած փողովուրդներու երջանկութեան եւ փրկութեան համար կուտեցան ու յաղթեցին: Ճէնկիկ խան եւ իր նմանները յաղթողներ են, բայց հերոսներ չեն, այլ մարդասպաններ, հրէշներ: Սամսըն եւ Բոյալ թերեւս աւելի մեծ ըլլային եթէ... յաղթուած ըլլային: Մարտիրոս-հերոսներ պիտի ըլլային անոնք: Մարտիրոս հերոսը անհամեմատապէս մեծ ու վսեմ է հերոսէն:

հակառակութեան աշդիւնք են, եւ թէ ինք խղճի հանգարտութեան մասին հրեշտակէ մը չի տարբերիր: Այս առթիւ Տէր Հայրը Պատրիարքարանէն Ս. Միւռոն խնդրած է... որուն այնքան պէտք ունի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Կ Ր Է Տ Է

Պոլսոյ զեպանատունները տակաւին իրենց կառավարութիւններէն ու է հրահանգ չեն ստացած կրէտէի վերջին արիւնհեղութիւններուն վերաբերմամբ: Դիւանագիտական ակումբներուն մէջ ընդհանուր կարծիքը սա է թէ ժամանակը եկած է կրէտական խնդիրը վերջնապէս լուծելու, ամէն բանէ առաջ թուրք զինուորները կղզիին վտարելով: Դուռը, բոլոր այդ գէպերուն առջեւ սոսա խնդր կը ձեւանայ եւ ըսել կուզէ թէ քանի որ տէրութիւնները իր ուժերը կապտած էին կղզիին մէջ, ինք չէր կըրնար անկարգութիւնները նախատեսել: Աստրիոյ եւ Խոալիոյ զեպաններուն շնորհած վերջին ունկնդրութեան մէջ, Աուլթանը լուրջովին խուսաբեր է կրէտէի խօսքը բանալէ:

Եւ սակայն անդիտական հիւպատոս Սըր Պիլիթի բացած քննութիւնը իր հաստատէ թէ թուրք զինուորները բնու չեն աշխատած ապստամբներու ի գործ գրած կողոպուտը եւ յարձակումները արդիւրու: Ասկէց զատ հաստատուած է թէ անկարգութեանց ամենէն կրակոտ ատենն իսկ, թուրք իշխանութիւնները անքն էին խոստանին եւ ստորապայտցն ալ սա է թէ նոր ուրբակոծման մը լուրը աննկնուն պէս, մէկ նշան մը բաւական եղած է հրձիգութիւնները արդիւրելու:

Նոյնը ինչպէս Հայաստանի եւ Պոլսոյ ջարդերուն ատեն: Կատարեալ մեղսակցութիւն կառավարութեան եւ խոստանին:

Մեռնողներուն թիւը կարծուածէն շատ աւելի է: Փլատակներուն տակ բազմաթիւ դիակներ կը գտնուին: Անդիտական հիւպատոսին աղջիկն ալ իր զաւկին հետ մէկտեղ անհետացած է: Եւրոպական նոր ուժեր հասած են Քանտիա: Քրիստոնէից թաղը ամբողջապէս գրաւուած է միջազգային զօրադուներով: Չարը 9,000 բուպլի նպաստ մը զրկած է կրէտացիներուն:

ԷԼԻՉՍՊԵԹ ԿՑՑՐՈՒՇԻՆ

Տարաբախ կայսրուհիին յուշարկաւորութեան հանդէսը թէ եւ Վիէննայի մէջ տեղի պիտի ունենայ, այլ մարմինը, իր կտակին համեմատ պիտի թաղուի Քորֆուի մէջ «շատ մտախի ծովափին, այնպէս որ ալիքները անդադար փշրուելու զանգե-

րեղմանիս վրայ»: Շատ մտախի փոքրիկ վանքին ուր իր ձեռքով հետեւեալը գրած է, «Երբ որ Աստրիոյ էլիզապէթը հոս կը նստեր, զեպիւնները իրեն համար աւելի մեղմ կը փշէին. եւ ժայռը որ իրեն համար կը ծածկուէր ծաղիկներով, պիտի սիրէ իր յիշատակը պահպանել»:

Գալով մարդասպանին, չկարծուի թէ տգէտ ու գինեմուլ զործաւոր մըն է: Լուչէնի, 25 տարեկան, իրաւագիտական ուսանող էր եւ իր արտակարգ սրամտութիւնովը նշանաւոր հանգիսացած իր յաճախած այլ եւ այլ համալսարաններուն մէջ:

Վերջէն իր ուսմունքը բոլորովին թողած էր անիշխանական զործիչ դառնալու համար:

Չուրիխի մէջ վերջերս գուժարուած անիշխանական ժողովի մը մէջ որոշում արուած էր որ հոկտեմբերի 1էն առաջ վեհապետ մը պէտք էր իյնալ անիշխանական փանակին տակ: Աւագտերթո թագաւորը եւ Պ. Ֆէլիքս փոքր ընտրուած էին իբրեւ առաջին զոհեր: Բայց սուրիկանութեան հսկողութիւնը վրիպեցուցած էր այս արիւնոտ դիտաւորութիւնները:

Առկից 15 օր առաջ գումարուած ուրիշ ժողովէ մը Լուչէնի բաժնուած էր հետեւեալ խօսքերը արտաբերելով. «Ընկերներ, կեղքում որ ամիս մը չանցած, թագաւոր մը կամ թագուհի մը սպանած պիտի ըլլամ»:

Եւ երդումը բռնեց:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Այս պահուս, Անգլիա եւ Ֆրանսա՝ կաշխատին ֆուրքիոյ 1855ին իրենց երաշխաւորութեան տակ ըրած 5 միլիոն ոսկիի փոխառութեան տողուը հարիւրին 4էն 2 1/2 ի իջեցնել տալ: Այս կերպով թուրքիա 600,000 ոսկիի շահ մը պիտի ունենայ: «Տէյլի Իւլզ» այս լուրը հաղորդելով, կառավարկէ որ վերեւի տէրութիւնները այս ծառայութիւնը մատուցանելէ առաջ պայման դնեն որ թուրքիա, ի նպաստ հայերուն բաժին մը հանէ այդ գումարէն:

Սպանիոյ Գերալտը կառավարութեան արտօնութիւն տուաւ հաշտութեան բանակցութիւնները կատարել բոթօգօլին հիման վրայ:

Սպանիոյ գլխաւորաբար լեռնային մասերուն մէջ, քարլիտները մեծ քանակութեամբ զէնք բաժներ են իրենց կուսակիցներուն: Այս բաշխումները մասհոգութեան մէջ կը թողու կառավարութիւնը, որ միշտ ներքին յեղափոխութեան մը վտանգներուն ենթակայ է:

Մանիլէն կը հեռագրեն թէ ապստամբները ամբողջ Լիւսոն կղզիները գրաւեր են, բաց ի Մանիլ եւ Քալիթ քաղաքներէն:

—Գիշեր զօրավարը առաջարկեք է Գարթու մի մէջ ուսումնարան մը հաստատել ի պատիւ Կորտոն զօրավարին:

Ա Ձ Դ

Արժ. Պատ. Հայկ Եարարեան յանաշիկայ Սեպտ. 6/18 Կիրակի առաւօտեան ժամը 9ին հայերէն լեզուա պիտի շարունակէ այն քարոզին՝ որ է «Աղբիւր ճշմարտ. զործունէութեան»:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Ձեր վաճառատան համար եթէ կը փափագիք լաւ պաշտօնեայ մը ունենալ, դիմեցէք խմբագրութեանս որ պիտի յանձնարարէ ձեզ տօմարակալութեան եւ առևտրական գործառնութիւններու մէջ փորձառու երիտասարդ մը: Դիւրամտաչելի թոշակով կը բուսականանայ եւ կարող է իր բարոյականի մասին ընտիր երաշխաւորութիւններ հայթայթել:

Պ Օ Ր Ս Ա

Վառճա 5 Սեպտեմբեր. ՊՈՒՂՏԱՅ Վազօն, լիպրա 55—58, հէքթօլ: 8—9.10 Քրանք Արապա, լիպրա 55—60 հէքթօլ: 8—11 Քրանք

Ա Ր Ֆ Ա

Լիպրա 42—50 հէքթօլ: 4.60—5.20 Քրանք

Ե ՈՒ Ա Յ Յ

Կիւնտէ 8—10 արապա կէլմէքտէ տիր: 4—4.40 Քրանք

Տ Ա Ր Ը

Կիւնտէ 5—6 արապա կէլմէքտէ տիր: 58—60 լիպրա, 4.60—5 Քրանք

Ֆ Ա Ս ՈՒ Լ Ե Ս

Կիւնտէ 70—80 արապա կէլմէքտէ տիր 100 օգգաւր 15—22 Քր. մալա կէօրթ: Առապա մուամէլէսի նարօլտոն 21 Քրանք հիսապը իւլ տիր: Կիւնտէ 8—10 վազօն, 200—250 արապա պուզաւայ, 70—80 արապա արբա կէլմէքտէ տիր:

Վ Ա Ր Դ Օ

ԵՐԿՈՒ ՍԷՐ (ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ) —) (—) (Գին 1 Ֆրանք)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնաի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՛ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը, Սօֆիա՛ Տ. Մուշկ Արթուրի ջով:

Մօտերս մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Բռնութեան զոհերը»:

ԻՄԱՆՈՒՑՈՒՄ

Կուզէ՞ք վաճառատան լաւ պաշտօնեայ մը. դիմեցէք Շարժումի խմբագրութեան, որ ցոյց կուտայ հայ երիտասարդ մը որ ինք տարիէ ի վեր կառավարական պաշտօն կը վարէ եւ տօմարակալութեան ձեւին համար Վառնայի առևտրական գրասենիկէ վկայուած է: